ԱՐԱՐ ՉՈՐՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ԹԱԳԱՒՈՐ

Պալատական սրահ՝ արեւելեան ոճով զարդարուած, աշակողմը՝ արքայական թախտ, դիմացը՝ վարագոյրով սքողած մուտք։ Իսկ ձախակողմը՝ պատշգամբ, որ բացւում է հրապարակի վրայ։ Պատշգամբի պատի վրայ. դիմաց ու ձախ պատերի անկիւնում դէպի դուրս է նայում մի այլ փոքրիկ պատշգամբ՝ հովանիով։ Թախտի մօտ պատին է կպցրած վագրի մորթին։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս է գալիս եւ բարեւ բռնած կանգնում վարագոյրի աջակողմը։ Չոր ու ցամաք, արագաշարժ, մանրաքայլ արարած՝ մկան աչքերով, շարժ ու ձեւերը ծիսական, մեքենական։)

ՆԱԶԻՐ.– (Ներս մտնելով խոնարհ ողջունում է Սենեկապետին) Տէր ի՛մ,

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Պարսկական ողջոյնով) Տէր ի՛մ,

ՆԱԶԻՐ.– (Կանգնում է սենեկապետի դիմացը։)

ՍԵՆԵԿԱՊԵՏ, ՎԵԶԻՐ.– (Ներս մտնելով Սենեկապետին ու Նազարին ջոկ–ջոկ) Տէր ի՛մ։

Մտնում են ապա միւս պաշտօնեաները՝ զօրապետ, գանձապետ, պալատականներ ու բոլորը նոյն կարգով ողջունելով իրար՝ կանգնում են երկշարք ու բարեւ բռնած՝ սպասում երկիւղածութեամբ։

ՆԱԶԻՐ.– (Սենեկապետին) Արթնացե՞լ է Գերագոյնը։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Երեկոյեան ընդունելով մահիճ՝ անփոյթ ննջեց մինչեւ արշալոյս, ծագեց արեգական հետ եւ. ահա իսկոյն կճառագէ արեգնափայլ։

ՆԱԶԻՐ.– Անմոռա՛ց օրեր են։ Ի՞նչ էր մեր պետութեան նաւը մեր նախկին պարտուած թագաւորի օրոք։ Ալեկոծեալ տախտակամած։

ՎԵԶԻՐ.– Այո՛, ինչ գերագոյնը յաղթեց մեր նախկին ժլատ ու ապիկար թագաւորին, ես երջանկութիւնից չեմ քնում։

ՆԱԶԻՐ.– Ես եւս չեմ քնում։ Եւ արդարեւ, Նազար երջանիկը երջանկացրեց մեր պետութիւնը ու հիմա արժան է եւ իրաւ, որ ինքը հանգիստ առնէ պահ մի։

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ.– Երջանկութիւնը իմ էլ աչքերից քունը խլեց։ Վայելում եմ հարատեւ արթնութիւն մի, որ դրախտային քնի է օրինակ։